

373.5

pu - 35

373.5:
v-35

0 120 - 10

ՀԱՐԵՆԲ ԴՈԼԻՏԵԽՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ

ՎԵՐՈՒՄՆԵՐ - ՄԱՍԻՆԵՐՆԵՐ ԶԵՆՈՒՄԻՆԵՐՆԵՐԻ ՍԵՆՏՐ

ԽԱՐԻՏՈՆՈՎԱ

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑ

ՊԵՏԼՐԻՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

8 MAY 2013

ՀԱՅԳԱՐԵՆԲ ԴՈԼԻՏԵԼՈՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ
ՀՍԽՀ ԼՈՒՍԻՏԱԿՈՄԵՏ—ՄԱՍՍԵՐԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՑԵԿԱՐ

373.51

10-34

ԽԱՐԻՏՈՆՈՎԱ

այ

1542

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑ



1931

ՅԵՐԵՎԱՆ

12226-57

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԴԴՐՈՅ

Մեր լերկերն ապրում ե հսկայական արդյունաբերական զարգացման շրջան, մեկը մյուսի լեռներից կառուցվում են ֆաբրիկաներ ու գործարաններ, մեկը մյուսի լեռներից կառուցվում են նույնիսկ համաշխարհային մասշտաբով չտեսնված ջրանցքներ, ամբարտակներ, կառուցվում են հզոր էլեկտրոկայաններ, ստեղծվում են ֆաբրիկաների ու գործարանների նոր կոմբինատներ, արդյունաբերության բոլորովին նոր սեսականեր:

Դնեպրոսարոյ, Ստալինգրադի տրակտորի գործարան, այնպիսի խորհանդեսություններ, ինչպիսին ե «Գիգանտ»-ը, կյանքի ուժգին հրամանով բուսնում են, ինչպես հին հեքիաթներում եր պատմվում:

Բայց այս շինարարությունը հեքիաթային ե թվում միայն ցնորամիտներին: Այնինչ սա շատ թնական ե մի լերկրի համար, վորի տերը իրենը աշխատավորներն են, վորոնք ուժգին լարվածությամբ նոր կյանք են կառուցում:

Հրատ. № 1645

Գրառեպար № 6419 (բ)

Պատվեր № 2625

Տիրաժ 3090

Պետհրատի տպարան, Յերևան

Նման շինարարութիւնը պահանջում է աշխատանքը լավ հասկացող հարյուր հազարավոր ինժեներներ, վորակյալ բանվորներ, կոնստրուկտորներ, գյւտարարներ: Բոլորովին այլ տեսակ պիտի լինեն բանվորները մեր յերկրում:

Իսկ վերտեղից պիտի վերցնենք բանվորների ու մասնագետների այդ նոր կադրերը, վորոնք այժմ պահանջվում են մեր արդյունաբերութեան համար:

Իհարկէ, այդ կադրերը մեզ տալիս է մատաղ սերունդը, վորն այժմ սովորում է դպրոցներում:

Ներկայումս պետութիւնը զբաղված է կադրերի պատրաստման խնդրով: Նրանց պետք է պատրաստել ամենափոքր հասակից, և ընական է, վոր վորոշված է վերակառուցել մեր աշխատանքային դպրոցը, որգանապէս ձուլել գործարանի, ֆաբրիկայի հետ:

Մեր հին յոթնամյա դպրոցը կամ համարյա բոլորովին չեր տալիս աշխատանքային ունակութիւններ, կամ տալիս եր նեղ-արհեստավորական նւնակութիւններ, առանց գիտական աշխարհայացքի, առանց լրիվ չափով գաղափար տալու վաղջ արտադրութեան մասին:

Պոլիտեխնիկական դպրոցը տալիս է վոչ միայն լավ բանվոր, այլ և այնպիսի բանվոր,

վորը հասկանում է տվյալ գործարանի կյանքի բոլոր յերևույթները, ընդունակ է զարգանալ, սովորել, կազմակերպել:

Ներկայումս պոլիտեխնիկական կրթութիւն ամենից հաշոյ կերպով կարող է տալ գործարանային յոթնամյակը:

Այդ դպրոցն իր մեջ պետք է դաստիարակի կոմունիստներն մատծող ապագա կադրեր: Դպրոցներին կից պետք է լինեն արհեստանոցներ: Այս արհեստանոցները պետք է նմանվեն այն գործարանին, արդյունաբերութեան այն տեսակին, վորի հետ կապված է տվյալ դպրոցը:

Պոլիտեխնիկական դպրոցն իրեն նպատակ է դնում հենց սկզբնական տարիներից կեթ աշխատանքի ամբողջ բովանդակութիւնը կազմակերպել արտադրողական փոզով:

Յեւ այսօր այս դպրոցը՝ գործարանային յոթնամյակն է:

ՄԵԾԱՄԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊՒ ՓՈՔՐԱՍԱՆՈՒ- ԹՅՈՒՆԸ

Սորմովոյի գործարանային 7-ամյակի յերեխաները անկետաներ են լրացրել իրենց ցանկութիւնների մասին:

Համարյա բոլոր յերեխաները ցանկանում են

լինել՝ մեկը փականագործ, մեկը կոնստրուկտոր,
մյուսը հյուան, ինժեներ, մեխանիկ:

Այն հարցին, թե՝ «ով ինչ է ուզում լինել»,
գործարանային դպրոցների բոլոր յերեխաները
պատասխանում են, վոր նրանք ցանկութուն
ունեն աշխատելու գործարանում, գազգյահի վրա,
մեքենաներ կառուցել:

Բայց յերեխաները այս մասին միայն ան-
կետաներում չէ, վոր գրում են: Առաջին հար-
մար դեպքում, թողնելով դպրոցը, նրանք վա-
զում են գործուս, դեպի արտադրութուն: Գոր-
ծարանային Դ-ամյա դպրոցի աշակերտները մեծ
մասամբ բանվորների ու չքավորների յերեխա-
ներ են:

Այդ յերեուլթը առաջանում է գլխավորա-
պես նրանից, վոր դպրոցը, ինչպես վոր նա կա,
դեռևս յերեխաներին չի տալիս այն գիտելիք-
ներն ու պատրաստութունը, վորպեսզի նրանք
լինեն «գազգյահի իսկական բանվոր»: Յերեխա-
ները հետաքրքրվում են այն բանով, ինչ վոր
կատարվում է նրանց շուրջը, ամենուրեք ցան-
կանում են գործադրել իրենց ուժը, իրենց ալ-
տիվութունը, ինիցիատիվան, հնարագիտութուն-
նը: Իսկ դրա փոխարեն դպրոցում նրանց հա-
ճախ հրամցնում են բառակերութուն, գրքի
ուսմունք:

Բանվորների յերեխաների դպրոցից փախ-
չելու յերկրորդ պատճառն էլ նրանց յետամնա-
ցությունն է ու յերկրորդ տարին մնալը:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԼԿՏԻ ԽԱԲԵՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուրժուական մանկավարժներն ասում են,
վոր բանվորների յերեխաներն ի բնե ավելի քիչ
ընդունակություններ ունեն, քան ինտելիգենտ
ծնողների յերեխաները և վոր այդ պատճառով
նրանք չեն կարող ըմբռնել այն բոլոր գիտելիք-
ները, վորոնք տրվում են դպրոցում:

Այս լախրը զրպարտութունը տալածվում է
արտասահմանում նրա համար, վորպեսզի բան-
վորների յերեխաներին զրկեն կրթութունից,
վորպեսզի նրանց թույլ չտրվի բարձրագույն
դպրոցներ ընդունվելու, վորոնք հիմնված են
բուրժուականների սղանների ու աղջիկների համար:

Յեթե բանվորների յերեխաները դպրոցում
յետ են մնում և միևնույն խմբում նստում են
յերկու տարի, այդ լինում է այն պատճառով,
վոր նրանք սովորելու համար չունեն բավարար
պայմաններ: Յերեխան տանը նրանք չունեն նույն-
իսկ իրենց համար մի անկյուն, վոր կարողա-
նան կարգալ, նրանց քչում են սեղանից դեպի
աթոռ, աթոռից՝ պատուհան: Կան դեռ անգիտա-
կից ծնողներ, վորոնք կարծում են, թե իսկա-

կան աշխատանքը՝ ֆիզիկական աշխատանքն է, իսկ տեղում նստելն ու «գիրք կարդալը» աշխատանք չէ, այլ ավելի շուտ՝ բավականություն, ինչպես կինոն:

Ցերեխաների ուսման գործում մեծերի ցույց տված ոգնության մասին խոսելն անգամ ավելորդ է: Չե՞ վոր ծնողներն իրենք հաճախ կհասգրագես են:

Դպրոցներից լերեխաների պակասելու մի գլխավոր պատճառ ել կա. դա բանվորական ընտանիքի նյութական աննպաստ դրությունն է՝ լերեխաներին փոխամասնով, հագուստեղենով և դասագրքերով ապահովելու խնդրում:

ԼԱՅՆ ԲԱՆԱԼ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԴՌՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ 7-ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարյուր հազարավոր լերեխաներ թողնում են դպրոցը, չավարտելով նույնիսկ Ա. աստիճանը: Ցերեքեմ հնարավորություն չունենալով բարձր տիպի և միջնակարգ դպրոցներ գնալու, այդ լերեխաները գնում են ֆաբգործուս:

Փաբգործուսը ստիպված է լինում շատ մեծ ժամանակ կորցնել այդ լերեխաների հասարակ գրագիտության բարձրացման վրա, նրանց տարրական, տեխնիկական ու արտադրական գիտելիքներ սովորեցնելու վրա: Այս հանգամանքը

լերկարացնում է ֆաբգործուսի ուսման տեղում լայնությունը և նվազեցնում ուսման վարակը:

Մեր արդյունաբերության լայնությունը և գնում անսահման արագությունը: Մենք կառուցում ենք հսկայական ֆաբրիկաներ ու գործարաններ: Այսպիսով այս գործարանները կաշահանջն մեզնից հսկայական քանակությամբ փորձված, լավ պատրաստված բանվորներ:

«Հնգամյակը սոցիալիզմի ամենամուր հիմքն է դնում»: Բոլոր բանվորները պետք է սովորեն աշխատել սոցիալիստական՝ միացնել իրենց ուժերն ուրիշների հետ, հնարել աշխատանքի համար ամենալավ ձևերը, արագացնել աշխատանքի տեմպերը, կազմակերպել անփորձ բանվորներին:

Չե՞ վոր Իլիչը դրանց մասին ասել է, վոր նրանք պետք է լինեն կոմունիստական հասարակակարգ կառուցողը:

Տեխնիկան մի տեղում չի կա՝ գնում, արտագործության ձևերը փոխվում են, լավանում են: Նոր մեքենաներ գեկավարելու, նոր, կատարելագործված դազգլահների վրա աշխատելու համար բանվորները պետք է լավ ծանոթ լինեն արտագործության ամբողջովին, կարողանան վարվել նրա զանազան մասերի հետ:

Այդպիսի բանվորներ պետք է տա ֆաբգործուսը: Ցերեխաները լայն տեխնիկական

գրագիտության գործում ամենաչնչին հապա-
ղումը դանդաղեցնում է մեր յերկրի շինարա-
րության ընդհանուր պլանը:

Ստիպված ենք կազմակերպել հասուկ դա-
սընթացներ յերեխաներին Փարգործուսի համար
պատրաստելու նպատակով: Բայց չե՞ վոր կար-
ճատե դասընթացները չեն կարող փոխարինել
բազմամյա պատրաստության, վոր նրանք պիտի
ստացած լինելին մանկական հասակում:

Մեր բոլոր քաղաքի և գործարանային 7-ա-
մյա դպրոցներն այս տարի ավարտում է 1580
յերեխա, իսկ մոտ ապագայում նորից կարիք կլի-
նի հազարավոր յերեխաներ ընդունել Փարգոր-
ծուսները, և վոչ միայն Փարգործուսները, այլ և
տեխնիկոսներն ու պրոֆդպրոցները: Ի՞նչ արած:
Գուցե բանվորների յերեխաները քիչ լինեն
ՀՍԽՀ-ում:

Կենտրոնական վիճակագրական վարչությու-
նը ԽՍՀՄ բոլոր յերեխաներին հաշվել է: Պարզ-
վել է, վոր 12—15 տարեկան բոլոր 1221 հազար
յերեխաներից 5—7 խմբերում սովորում են մի-
այն 625 հազարը: Յետսամնացության պատճա-
ռով բարձր խումբ չեն փոխադրվել մոտ 250
հազար:

Իսկ 300 հազարից ավել յերեխաներ դեռ
ևս բոլորովին չեն սովորում:

Ուրեքը են այս 300 հազար յերեխաները:
Պարզ չե՞ արդյոք, վոր սրանք չբանվորների ու
բանվորների յերեխաներ են:

Ահա թե ինչու ներկայումս մեր գլխավոր
խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի ավե-
լացնենք 7-ամյա դպրոցների թիվը գործարա-
նային ռալոններում: Գործարանային 7-ամյա
դպրոցները պետք է ընդգրկեն բոլոր բանվոր-
ների յերեխաներին:

Այս խնդիրը կարելի լի լուծել միայն այն
ժամանակ, յերբ բոլոր 7-ամյա դպրոցները կը-
դառնան գործարանային դպրոցներ, յերբ նրանք
կդառնան այն գործարանի անբաժան մասը, վորին
դպրոցը կցված է, յերբ դպրոցում սովորողները
հնարավորություն կունենան կապվել այդ արտա-
դրության՝ հետ, ուսումնասիրել ու արտադրու-
թյան ճյուղերը, ոգնելու ու ակտիվ կերպով մաս-
նակցելու նրա աշխատանքներին:

«Սորմովոյի գործ. 7-ամյակները գտնվում են
«Կարմիր Սորմովո» գործարանից յերկու քայլի
վրա: Դպրոցների լուսամուտներից յերևում են
գործարանի դռները, վորոնք կարծես կանչում
են՝ «յեկեք, յերեխաներ, ուսումնասիրեք ձեր
արտադրությունը»:

Բայց բանից դուրս է գալիս, վոր վորպեսզի
կարողանան գործարան մտնել, պետք է 6 կի-

անկողնի տարածությունը քարշ գան եղակուրտն
բազա գնալու և թուլատվություն ստանալու
համար: Ձգվածը և արդյո՞ք դարձանալ, վոր լերը
ամբողջ յերկիրը վողկորված և «կարմիր
Սորմովոյի» նվաճումներով, մեր խորհրդային
դիրքերի արտադրությունը, գործ. 7-ամյակի
լերեխաներն այդ արտադրության մասին գի-
տեն միայն լսելով:

Յերեխաների ծանոթությունը գործարա-
նին մեծ մասամբ արտահատվում և եղակուր-
տիաների միջոցով: Սա այն չէ, ինչ հարկավոր է
բանվոր-պատանուն: Իր արտադրությունը նա
պետք է ուսումնասիրի վոչ թե նայելով, այլ
անմիջականորեն մասնակցելով նրան:

ՎՈՉ ԹԵ ԱՐԶԵՍՏԱՎՈՐՆԵՐ, ԱՅԼ ՍՈՑԻԱԼԻՉՍ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ

Դպրոցը լերեխաներին պետք է հնարավո-
րություն տա կյանքում գործադրելու իրենց գի-
տելիքները: Նրանք պետք է բարեկամանան մեքե-
նայի հետ, դազգյա՞ն հետ, սովորեն վարվել նը-
րանց հետ, աշխատել նրանց վրա:

Մանկությունից լերեխաները պետք է սո-
վորեն կառուցել, քանդել ու հավաքել մեքենայի
մասերը:

Թող սկզբում դրանք լինեն շատ հասարակ,

ինքնագործ, լերեխական մեքենաներ, բայց
լինեն կենդանի, շարժուն, արագաշարժ: Նրանց
միջոցով լերեխաները կսովորեն գործադրել ի-
րենց ուժերն ու գիտելիքները, իրենց հնարագի-
տությունը: Ձուգընթացաբար նրանք կծանոթա-
նան գործիքների հետ, գանազան նյութերի,
նրանց հատկությունների ու մշակման ձևերի
հետ:

Հասակավոր լերեխաների համար հարկավոր
են հատուկ արհեստանոցներ՝ փայտի ու մետաղի
մշակման ցեխեր, հատուկ լաբորատորիաներ՝ ֆիզի-
կական, քիմիական, գծագրական և այլն: Լավ
կլինի, լեթե այս արհեստանոցներն ու լաբորատո-
րիաները լինեն ընդհանուր ֆարգործուսնների
և գործ. 7-ամյակների համար:

Տնտեսավարները ընդդիմանում են նման
միացմանը: Գործ. 7-ամյակները կառուցվում
են ֆարգործուսններից առանձին: Այսպիսով գործ.
7-ամյակների արհեստանոցները կարող են վերած-
վել արհեստավորական արհեստանոցների, ուր
լերեխաները գուցե և սովորեն ձեռքով պլաս-
տիկաներ հղկել, շրջանակներ պատրաստել,
դարակներ շինել, բայց այդ դեպքում նրանք
ծանոթ չեն լինի մեքենայացած արտադրու-
թյանը, չեն կարող գծումներ կատարել, չեն կա-
րող իրենք հնարել, մեքենա շինել:

Մեզ վոչ թե արհեստավոր — անախագործ-
ներ են հարկավոր, այլ սոցիալիզմ կառուցողներ,
վորոնք ծանոթ լինեն ժամանակակից տեխնի-
կային, և վոչ թե՝ միջնադարյան:

Մեքենան կազմակերպում ու կարգավորում
է մարդու աշխատանքը, զարգացնում է արագու-
թյուն, ճարակութուն, ութմիկ շարժումներ, հա-
մաչափութուն, հարմարվելու ընդունակութուն
և այլն:

«Հնգամյակը չորս տարում» լոգոնգը պա-
հանջում է աշխատանքի ուժեղ թափեր... Լախո-
րեն ծավալվում է սոցիալիստական մրցումը:

Սակայն սա չի նշանակում «շատ արտա-
դրեք և ուրիշ վոչինչ»: Այս նշանակում է
սովորեցնել լավ, արագորեն, եներգիալի ու
ժամանակի ամենաքիչ վատնումով աշխատել
այնպես, վորպեսզի ստացվի մեծ քանակությամբ
և լավ վորակի արտադրանք:

ԲՈԼՈՐԸ ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐ

Գործ. 7-ամյակում պետք է զարգացնել
լերեխաների մեջ հմտութուն, արագաշարժու-
թյուն, կոլեկտիվում աշխատելու կարողութուն,
մշտապես կատարելագործվելու ցանկութուն, ել
լայնացնելով իրենց գիտելիքների ու կարողու-
թյան շրջանակը:

Այս հատկություններով տարբերվում է պոլի-
տեխնիկապես դրագետ բանվորը արհեստավորից,
վոր փտելու յե իր արհեստի մեջ:

Հարկավոր է, վորպեսզի յուրաքանչյուր բան-
վոր կարողանա ռացիոնալ դարձնել աշխատանքի
ձևերը և հնարի նոր ձևեր:

Առաջներում գյուտարարությամբ զբաղվում
է յին մասնագետ-ինժեներներն ու տեխնիկները:
Իսկ այժմ մեզանում արդեն շատ հազարավոր
բանվոր-գյուտարարներ կան:

Բանվորը իրեն հանձնարարված գործի կույր
կատարողը չէ, այլ նա սոցիալիստական շինարա-
րության կենդանի ու գիտակից մասնակցողն է:

Ահա թե ինչու այնքան կարևոր է զարգաց-
նել լերեխաների մեջ գյուտարարությունը: Պետք
է խրախուսել լերեխաների ամեն մի ստեղծա-
գործական միտքը և ոգնել նրանց իրականա-
ցնելու այն: Փոքրերին միշտ պատրաստի նմուշ-
ներով կատարելու աշխատանք են հանձնարա-
րում և այգլիսով վանում են նրանց միջից
ստեղծագործական ձգտումը: Հասակավոր լերե-
խաների աշխատանքն արհեստանոցներում վեր
է ածվում հասարակ արհեստի, Պետք է հնա-
րավորություն ստեղծել հասակավոր լերեխանե-
րին անմիջապես արտադրության մեջ աշխատեց-
նելու, կազմակերպել գործ. 7-ամյակների և

Փառգործուհիների լերեխաների համար աշխատանք ընդհանուր ցեխերում:

Նրանք շուտ կծանոթանան, թե ինչ մասնագիտություններ գոյություն ունեն ավել արտադրության մեջ, նրանք հեշտություն մասնագիտություն կընտրեն նաև իրենց համար:

Զե՛ վոր բազմաթիվ լերեխաներ փոշմանում են, վոր ընտրել են ավել և վոչ մի այլ մասնագիտություն, շատերը թողնում են ուսումը, վորովհետև աշխատանքը նրանց չի բավարարում կամ դուրեկան չէ:

ՎՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԱՎՈՐ ԶԵ

ԺՏԳԽ-ի հրամանում ասված է, վոր գործարանային վարչությունները պետք է ոգնեն գործ. 7-ամյակներին արհեստանոցներ ու բանվորական սենյակներ ստեղծելու: Բայց գործնականում ինչպես է ի կատար ածվում այդ հրահանգը:

Մի գործ. 7-ամյակ հայտնում է. «Մեր գործ. վարչությունը վոչ մի ոգնություն չի ցույց տալիս գործ. 7-ամյակի արհեստանոցները կանվորելու գործում: Մեզ թույլ չեն տալիս զնալ արտադրության մեջ, նույնիսկ եքսկուրսիա, իսկ ցեխերում աշխատել՝ առավել ևս»:

Մի այլ Փառգործուհի հայտնում է. «Ամբողջ ոգնությունը լեզուով այն, վոր կոմսոմոլի շտա-

թորյակի ժամանակ կոմսոմոլիսաները վերցրին գործարանի ատաղձագործական, ծակիչ ու սրգմիչ դադգյանները»: Ահա բանն ուր է հասել, կոմսոմոլիսաները դադգյանները ստացել են համարյա ուժով:


Մի այլ գործարան «Հոկտեմբերի գործ. 7-ամյակին «նվիրել է» 48 հատ յերկաթիկ, 9 հատ ոնդա և մի քանի հատ դուր, իսկ գործարան եքսկուրսիա գնալու համար թույլատվություն ստացվում է մեծ դժվարություններով»:

Այս բոլորը հայտնել են գործ. 7-ամյակների լերեխաները համառուսական կոնֆերանսում:

Եթե՛ սա սոցիալիստական գործարանի ոգնություն է: Սա ավելի շուտ ժլատ մարդու վոգորմություն է, վորն իր քթից դենը վոչինչ չի տեսնում:

Մեր տնտեսավարները գեռես չեն սովորել հասկանալ, թե ինչ հսկայական ոգուտ է տալիս արտադրությանը լերեխաների պոլիտեխնիկական աշարաստությունը:

Բանվորների տեխնիկական կիսագրագիտությունը շատ թանկ է նստում մեր լերիկին:



ԿՈՒՆՏԱՐՇԱՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Գործ. 7-ամյակի յերեխաները վոչ միայն պիտի աշխատեն Փարզործուսի ու գործարանի արհեստանոցներում, այլ նրանք պետք է գործարանի հետ ապրեն մեկ կյանքով:

Գործարանի պարծանքն ու հենարանը՝ հարվածալին բրիգադները՝ հաշնապես պետք է լինեն դպրոցի պարծանքը:

Գործ. 7-ամյակի աշակերտի համար միևնույն չէ, թե նրա հայրը, մայրը, յեղբայրը, քույրը հարվածալին են, թե պրոգուլչիկ:

Դպրոցը չի կարող հարբեցողության, խուլիգանության, գողության, նյութերի փչացման կողքով սառնասիրտ կերպով անցնել:

Յերեխաները պետք է իրենց հայրերի ու մայրերի վարքի մասին ճիշտ տեղեկություններ ունենան, վորպեսզի պայքարեն թերությունների դեմ ու ոգնեն արտադրության աճման համար տարվող պայքարին: Յերեխաների համար հաճախ շատ ծանր է լինում ընտանիքում, ուր հայրը խմում է, ուր մայրը ծեծի յե լենթարկվում կամ նա ինքն էլ է խմում և իր յերեխաներին նույնն է սովորեցնում:

Բայց սրա դեմ միայնակ պայքարելը հաջո-

ղություն չի ունենում: Իսկ բոլոր յերեխաները միասին կարող են շատ բան անել:

Լենինգրադի «Մկարախոդ» Ֆաբրիկան գիմել և դպրոցին ոգնելու բանվորների մեջ տարածված հարբեցողության դեմ մղվող պայքարին:

Աշխատավարձի ստացման որը յերեխաները դեմոնստրացիայով գնացել են Ֆաբրիկա, զինված հարբեցողության դեմ յողունգներով հանուն առողջ, կուլտուրական կենցաղի: Յերեխաներն ամաչացրել են ծնողներին, և բանվորներից շատերը թողել են խմելը:

Մասնանները շարժվեցին դեպի կուլտարչավ հանուն կուլտուրական հնգամյակի: Յերեխաները պետք է կազմակերպված կերպով միանան այդ արշավին: Պետք է լինի կուլտուրական արշավի մի ընդհանուր պլան գործարկումի և դպրոցի համար: Յերեխաները կնքում են մրցման պայմանագրեր իրենց ծնողների հետ:

«Կրսանի Տրեուգոլնիկ» գործարանի 7-ամյակի պիտներներն ու աշակերտները կազմակերպել են դեմոնստրացիա, յեկել են գործարան և պահանջել են արտադրության մեջ հարվածալին աշխատանք, պայքար կորուստների, բրակի ու պրոգուլների դեմ:

Նրանք ծնողներին հեռանցկացրին կոնֆերանս և սոցմրցման պայմանագիր կնքեցին: Բան-

վորները պարտավորվեցին մանել հարվածալիք
քրիզադների մեջ, իսկ լերեխաները՝ հարվածա-
լիք լինել ուսման մեջ:

Յերեխաների առանյակ հազարներ ալժմ
կուլտամարտիկներ են: Նրանց թիվը կարող է
հարյուր հազարների հասնել:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵՆՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Յերբ ամբողջ կյանքը մեր շրջապատում
վերակառուցվում է նոր ձևերով, յերբ համա-
քլա բոլոր գործարաններն անցել են անընդհատի
ու հնգորակի, յերբ սոցմրցմանն ու հարվա-
ծախությանը մասնակցում է բանվորների մեծա-
մասնությունը, յերբ ցեխերում ստեղծվում են
արտադրողական կոմունաներ, այդ ժամանակ մի
թե լերեխաների կյանքը կարող է այլ կերպ ըն-
թանալ:

— Մի թաթախիլը իմ թանաքամանից, — ասում
է աղան հարևան խտարանին նստող լերեխա-
յին, — սա իմ թանաքամանն է, այս լեռ մեր տա-
նից էմ բերում:

Կան լերեխաներ, վորոնք մնում են առանց
աաք նախաճաշի, վորովհետև չեն կարողացել
փող վճարել: Իսկ մյուսներն ուտում ու հանգի-
րատ կերպով նայում են քաղցած լերեխաներին,

փոխանակ մտածելու թե ինչպես ոգնեն իրենց
ընկերներին:

Աղջիկներն ու աղաները նստում են առան.
ձին շաքերով, խուսափում են մեկը մյուսից,
հին գիմնագլխալի հոտն է փչում այստեղ:

Յերեխաները նաճախ վատ են վերաբերվում
այլ ազգությունների լերեխաների հետ: Իրենց
խավարամիտ ծնողներից նրանք ժառանգել են
այդ սխալ, վոչ պրոլետարական հայացքները:

Դպրոցում զանազան խմբերի մեջ գոյու-
թյուն ունի հիվանդոտ մրցում, արհամարհական
վերաբերմունք հասակավոր լերեխաների կող-
մից դեպի փոքրերը:

Յերեխաներն իրենց դպրոցական կյանքը
պետք է կառուցեն նոր ձևով սոցիալիստական
ձևով:

Չպետք է իր դրամով գպրոցական բուֆե-
տում բուլկի կամ թեյ գնել, այլ պետք է իր
փայլավճարը մուծել ընդհանուր դրամարկդն ու
կազմակերպել նախաճաշ բոլոր լերեխաների հա-
մար: Ամեն մեկն իրեն համար չի գնում գրքեր
ու գրական պիտույքներ, այլ վորոշ գումար է
մուծում կոլեկտիվ կերպով զնելու համար:

Յերեխաները պետք է մտածեն լեռ ընկնող
աշակերանների մասին, ոգնեն նրանց:

Պետք է կոլեկտիվ հոգատարություն լինի

նրանց մասին, վորոնք ծանր պայմաններում են ապրում, վորոնք զժվարանում են սովորել, մանավանդ այլ ազգութիւնների յերեխաներին նըկատմամբ, վորոնք լավ չեն տիրապետում այն լեզվին, վորով խոսում են յերեխաների մեծամասնութիւնը:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՇԵՏ

Յերեխաները չպետք է միայն գրքով սովորեն: Աւելի բան հնարավոր չի գրքում գրել, իսկ ալթմամեն մի որը մեզ մի նոր բան է տալիս: Յերեխաները պետք է լավ հասկանան համաշխարհային բանվոր դասակարգի պայքարը կապիտալիզմի դեմ, նրանք պետք է լավ հասկանան նաև այն պայքարը, վոր մենք մյուսն ենք մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման համար:

Իսկական կենդանի գիտելիքներ կարելի չեն ստանալ միմիայն ակտիվ կերպով մասնակցելով յերկրի սոցիալիստական կառուցմանը: Ահա թե ինչու գործ. 7-ամյակի յերեխաները պետք է մասնակցեն այնպիսի մեծ գործերին, ինչպիսին են՝ «պայքար հանուն բերքատուության», «գյուղի կոլեկտիվացման», «հնգամյակի կատարման համար», «սոցիալիստական կենցաղի և կուլտուրայի համար»:

Այս աշխատանքներով յերեխաները պետք է դադարած լինեն վոչ միայն իրենց տրտադրության մեջ:

Գյուղատնտեսութիւնը պահանջում է ղեկավարութիւն բանվորների կողմից:

Գործ. 7-ամյակների յերեխաները պետք է գնան կոլտնտեսութիւն, ոգնեն գյուղացիների աշխատանքներին, մասնակցեն բանվորուհի մոր ազատագրմանը, ոգնեն հիմնելու հասարակական ճաշարաններ, լվացքատներ, մսուրներ:

Պիոներ կոլեկտիվի հետ միասին յերեխաները պետք է կազմակերպեն նաև իրենց ազատ ժամանցը: Ավելացնել տեխնիկական և գյուղատնտեսական մանկական կայանների, սպորտի հրապարակների, եքսկուրսիոն և տուրիստական բազաների թիվը, կազմակերպեն մանկական լավ կիներներ ու թատրոններ:

Գործ. 7-ամյակը պետք է հոգ տանի այն մասին, թե ինչպես պետք է ապրեն յերեխաներն ամառը: Գործ. 7-ամյակը պետք է հոգ տանի թուլակազմ և հիվանդ յերեխաների բժշկության մասին անտառային դպրոցներում ու սանատորիաներում, առողջների համար ճամբար կազմակերպի, եքսկուրսիոն խմբեր ու կոլտոգային բրիգադաներ պատրաստի:

Պիոներական ակտիվը կոմսոմոլի ղեկավարում

Թխամբ պետք է մասսաներին արշավի տանի հա-
նուն գործ. 7-ամյակի, հանուն պոլիտեխնիկական
աշխատանքի, հանուն սոցիալիստական կենցաղի
և կուլտուրայի:

Գործ. 7-ամյակը պետք է դառնա բանվորների
լեռնխանների կոմունիստական դաստիարակության
ամենալավ դպրոցը, լեռնխանների, վորոնք սոցիա-
լիստական շինարարության մասնակիցներն են
անդիսանում:

ՅԵՐԵՒԱՆԵՐԸ ԳՈՐԾ. 7-ԱՄՅԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Իսկ ի՞նչ կարող են անել իրենք՝ լեռնխանները
դպրոցը պոլիտեխնիկական և սոցիալիստական
հիմունքներով վերակառուցելու գործում:

Ստեղծել ուսումնա-արտադրական ցեխեր ու
նոր այնտեղ իսկական արտադրական լեզանակով
կառուցել աշխատանքը՝ ահա այն նպատակը, վոր
պիտի հետապնդի գործ. 7-ամյակի լուրջանջյուր
աշակերտ: Ամենուրեք կա մի դժբախտություն՝
կահավորության բացակայությունը: Կարծիք են
արդյոք լեռնխաններն ունեւ այս դժբախտությանը:
Կարող են: Նրանք կարող են հետախուզել, թե
գործարանում վորտեղ ի՞նչ կահավորություն ու
նյութեր կան, վորոնք կարող են պիտանի լինել

դպրոցի համար: Այս մասին նրանք պետք է ա-
մենաճիշտ տեղեկություններ հավաքեն գործա-
րանի կոմյերիտակոմիտեների, ծնողների ու «Թեթի
հեծեւագործ» միջոցով: Իսկ դրանից հետո արդէն
դժվար չի գործարանի վարչութիւնից ստանալ
դպրոցի համար այդ արժեքավոր իրերը գործար-
կումի, հարվածալիւնների ու կուսըշիշի աջակցու-
թյամբ:

Բայց այդ կահավորությունը մանկան աշխա-
տանքի համար այնքան էլ կարևոր չէ: Այդ պետք
է վերանորոգել ու հարմարեցնել մանկան ուժե-
րին ու հասակին: Այս գործը կարող են կազմա-
կերպել իրենք՝ լեռնխանները: Ձեն հրաժարվի նաև
հասակավոր ֆարգործուսցիները: Բանվորները
նույնպես չեն մերժի վերանորոգելու հարմարեց-
նել դազգյահը, գործիքները, մանգյանաները և
այլն, լեթե այդ մասին խնդրեն լեռնխանները:
Պետք է միայն համերաշխությամբ գործել:

Իսկ փոքրերի համար բանվորական սենյակ-
ները կահավորելու աշխատանքների զգալի մասը
կարող են կատարել իրենք՝ լեռնխանները: Որի-
նակ մի շարք գործ. 7-ամյակներում հասակավոր
լեռնխանները հրաշալի գործիքներ են պատրաս-
տում փոքրահասակների բանվորական սենյակ-
ների համար: Ֆարգործուսները նույնպես չեն
հրաժարվի ունեւ նրանց այդ գործում: Իսկ վճր-

քան մեծ ուրախութիւն կ'ապտճառեն այդ փոք-
րիկները, իբր նրանք սկսեն աշխատել մուրճե-
րով ու ռնգաներով:

Կա ևս մի մեծ դժվարութիւն յերեխաների
ուսումնա-արտադրական ցեխերի կազմակերպման
գործում— վերտեղից վերցնել նրանց համար շենք:
Սովորաբար դպրոցական արհեստանոցները տե-
ղավորվում են դպրոցների նկուղներում:

Այս չարիքի դեմ յերեխաները պետք է ան-
հաշտ պայքար հայտարարեն: Պատվովոր տեղ տալ
աշխատանքին դպրոցում: Քաշվեցեք մի կողմ,
ուսումնական ղեկավարներ, ազատեցեք աշխա-
տանքի տեղը: Կռիվ մանկական աշխատանքի ա-
մենալուսավոր ու ամենաազատ դատարանի համար:

Բայց դպրոցները ներկայումս շատ քիչ ու-
նեն այնպիսի շենքեր, վորոնք կարողանան բա-
վարարել մանկական ուսումնա-արտադրական ցե-
խերի պահանջներին: Պետք է պայքարել հատուկ
շենքեր կառուցելու համար:

Իսկ ի՞նչ կարող են անել այս գործում յերե-
խաները: Ամենից առաջ ազիտացիա մղել իրենց
ծնողների ու բանվորական հասարակայնութեան
մեջ, ապա հաստիակովոր յերեխաներից, ֆարգործու-
ցիներից, բանվոր-մանկավարժներից ու գործա-
բանի ինժեներներից կազմել ջիւարարական բրի-
գադաներ:

Ինժեներական-տեխնիկական մասից պետք է
պահանջել շինութեան հատակագիծը, սոցկուլտ-
բաժնից ու գործարանի վարչութիւնից՝ կառուց-
ման ծախքերը, բանվորներից ու մանկավարժ-
ներից՝ շաբաթօրյակներ, վորոնց մասնակցում են
նաև իրենք՝ յերեխաները: Յերեխաների ակտի-
վութեանից ու հաստատակամութեանից շատ բան
է կախված: Միայն նրանք պետք է գործեն կազ-
մակերպված կերպով:

Հետևյալ դիրքը, վոր կարող են գրավել յերե-
խաները, դա նրանց մուտքն է դեպի գործա-
րանն ու ֆաբրիկան: Ի հարկէ, կան այնպիսի գոր-
ծարաններ, ուր յերեխաներին չի կարելի թող-
նել՝ վտանգավոր, ռազմական և այլն: Բայց խոսքը
նրա մասին չէ: Չէ՞ վոր յերեխաներին շատ ան-
գամ չեն թողնում զնալ նույնիսկ այնպիսի գոր-
ծարան, վորը նրանց համար մատչելի չէ: Ահա
նման դժվարութիւնը կարող են հաղթահա-
րել յերեխաները: Ի՞նչպես: Իրենց աշխատանքով:
Պետք է ապացուցել բանվորներին ու գործարա-
նային բոլոր կազմակերպութիւններին, վոր յերե-
խաները լոկ հետաքրքրութեան համար չէ, վոր
գործարան են ձգտում, այլ վորպեսզի ոգնեն հըն-
գամյակը չորս տարում կատարելու աշխատանք-
ներին: Բայց ի՞նչպես կարող են ոգնել յերեխա-
ները: Նրանք կարող են ոգնել բանվորներին այդ

մարտական լողունգի համար մղվող պայքարի բո-
լոր բնագավառներում: Յերեխաները կարող են
ոգնել նաև պրոպագանդայի, բրակի, հարբեցողու-
թյան և անգրագիտության դեմ մղվող պայքարին,
կարող են աշխատել կոլտուրականության բար-
ձրացման համար, աշխատանքի, ազատ ժամանցի,
կենցաղի մեջ նոր՝ սոցիալիստական ձևեր մեղ-
ջելնելու համար և այլն... Յերեխաներն իրենց
կյանքը պետք է կառուցեն նոր ձևով վույ միայն
դպրոցում, այլ և իրենց ընտանիքում. նրանք
պետք է ոգնեն իրենց ծնողներին գործարանում
ծանր ու պատասխանատու աշխատանքներ կա-
տարելու ժամանակ:

Գործ. 7-ամյակի աշակերտները պետք է սո-
վորեն աշխատել նաև գյուղատնտեսության առ-
պարիզում. նրանք պետք է մասնակցեն նաև
գյուղատնտեսության վերակառուցման աշխա-
տանքներին: Այս աշխատանքների համար պետք է
փնտռել բազաներ: Ի՞նչ կարող են անել յերե-
խաներն այն գործում: Ամենից առաջ յերեխա-
ները կարող են իրենց աշխատանքով ոգնել յեն-
թուշեֆ կոլտնտեսության կամ յուրյանտեսության
աշխատանքներին և սրտ հետ միասին ծավալել
աշխատանքը բանվորական կոլլեկտիվ բանջարա-
բուծության մեջ: Իսկ դպրոցում կարող են նը-
րանք պահել կենդանիներ ու թռչուններ: Իրենց


արհեստանոցներում յերեխաները կարող են պատ-
րաստել վանդակներ, տաշտակներ և այլ անհրա-
ժեշտ իրեր: Նրանք կարող են ձեռք բերել լա-
վագույն արտադրողներ, կազմակերպել կենդա-
նիներին խնամելու լավագույն ձևեր:

Կարող են պատրաստել սրինակելի մարգեր,
ցանել լավորակ սերմեր:

Դպրոցի սոցիալիստական վերակառուցման
առաքարիզում յերեխաների ուժերին համեմատ
կարևոր գործեր դեռ շատ կան: Դրանց թվում
ամենակարևորն է՝ կազմակերպել իրենց կյանք
ու աշխատանքի մեջ՝ սոցիալիստական ձեվով:
Հասակավոր յեվ ուժեղ յերեխաներ պետք է
ոգնեն փոքրահասակ յեվ քույակավոր յերեխա-
ներին:

Թող պիտենենեն առաջնորդեն ամբողջակ-
սիվին յեվ յերեխաների բազմահազար բանակը
մղեն պայմար՝ իսկական պոլիտեխնիկական
յեվ սոցիալիստական դպրոցի համար:







355 98

ՀԱՅԿ ԴՈ ԿՈՊ. (1 Գ.)



ХАРИТОНОВА
ЗАВОДСКАЯ ШКОЛА

Госиздат ССР Армения
Эривань—1981

«Ազգային գրադարան»



NL0231895

52. 139